ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №8
«23» փետրվարի 2026թ. № ՇՄՆ-COP17-26/01 պայմանագրի

ք.Երևան «06» «03» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պ/կ Արկադի Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Սիմոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «№ ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.2, 2.4.1, 2.2.4 և 7.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «№ ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագիրը լրացնել՝

1.1.1. «COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ կահույքի ձեռքբերման և մատակարարման» փուլային ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նկարագրով (տեխնիկական բնութագիր)՝ համաձայն Հավելված №1-ի,

1.1.2. «COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ կահույքի ձեռքբերման և մատակարարման» փուլային ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նախահաշիվը՝ համաձայն Հավելված №2-ի,

1.1.3. «COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ կահավորման» փուլային ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նկարագրով (տեխնիկական բնութագիր)՝ համաձայն Հավելված №3-ի,

1.1.4. «COP17 համաժողովի անցկացման վայրի կահավորման (հավաքում մոնտաժում տեղափոխում տեղադրում և այլն) ծառայությունների ամբողջական ապահովում» փուլային ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նախահաշիվը՝ համաձայն Հավելված №4-ի,

1.1.5. վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն Հավելված №5-ի:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Կողմերը համաձայնվում և հաստատում են, որ.

ա) Համաձայնագրի 1.1.1 կետով նախատեսված և Հավելված №1-ում նշված կահույքը (այսուհետ՝ Կահույք) Կատարողը ձեռք է բերում և COP 17 համաժողովի անցկացման վայր մատակարարում է իր միջոցների հաշվին, իսկ Պատվիրատուն վճարում է Համաձայնագրով նախատեսված գումարը:

բ) COP 17 համաժողովի անցկացման վայր մատակարարելուց հետո 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում Կատարողը Կահույքը սեփականության իրավունքով փոխանցում է Պատվիրատուին՝ հանձնման-ընդունման ակտի հիման վրա: Հանձնում - ընդունումը կատարվում է Կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Պատվիրատուն իր ներկայացուցչին նշանակում և Կատարողին կոնտակտային տվյալները փոխանցում է Համաձայնագիրը կնքելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

գ) Կատարողը, COP 17 համաժողովի պատշաճ անցկացման նպատակով օգտագործում է Կահույքը և մատուցում է Հավելված №3-ում նշված ծառայությունները:

2.3. Կատարողը պարտավոր է Համաձայնագրի կատարման նպատակով կնքված պայմանագրերի կամ համաձայնագրերի և հաշիվ-ապրանքագրերի կամ երրորդ անձանց կողմից ներկայացված Համաձայնագրով նախատեսված ծառայությունների կամ աշխատանքների գնագոյացմանը վերաբերող այլ փաստաթղթերի պատճեն, դրանք կնքելուց կամ հաստատելուց կամ ստանալուց հետո 25 (քսանհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Պատվիրատուին:

2.4. Պատվիրատուին տրամադրել Պայմանագրի 2.3.2 կետով նախատեսված ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի համաձայնությունը (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ստանալու դեպքում)՝ Ծառայության մատուցման փուլային նկարագրի ու հանձնման-ընդունման արձանագրության վերաբերյալ:

2.5. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման նպատակով պարտավորություններ է ստանձնել երրորդ անձանց առջև, սակայն Պատվիրատուի գործողությունների կամ անգործության հետևանքով կամ

Պատվիրատուի կողմից Պայմանագիրը կամ Համաձայնագիրը դադարեցնելու կամ չեղարկելու հետևանքով երրորդ անձանց առջև առաջանում են նրանց հետ կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորություններ, ապա Պատվիրատուի կողմից այդ պարտավորություններն ամբողջ ծավալով ենթակա են հատուցման՝ Կատարողի կողմից հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու, ինչպես նաև ստանձնած պարտավորությունների շրջանակում սեփականության իրավունքով ձեռք բերված բոլոր նյութական արժեքները (առկայության դեպքում) և արդյունքային ցուցանիշները Պատվիրատուին հանձնելու դեպքում:

2.6. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման ընթացքում հրաժարվում է այն կատարելուց, ապա Կատարողը պարտավոր է վճարել Պատվիրատուին Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև հատուցել Համաձայնագրի 1.1.2 կետով սահմանված գնման առարկան այլ անձանցից ձեռքբերման դեպքում գների դրական տարբերությունը: Սույն կետով նախատեսված դեպքերում Կողմերը կազմում են փոխադարձ հաշվարկների ակտ, որով.

ա) Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում, իսկ Պատվիրատուն ընդունում է մինչ հրաժարման կամ լուծման պահը Համաձայնագրի արդյունքները,

բ) Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին վերադարձնել Համաձայնագրի շրջանակում կատարված բոլոր վճարումները, եթե դրանք չեն ծածկում փոխադարձ հաշվարկների ակտով կատարված ծախսերը:

2.7. Համաձայնագրի 1.1.4 կետով նախատեսված ծառայությունների համար կանխավճարը մարվում է մինչև Համաձայնագրով նախատեսված ծառայությունների ավարտը՝ Պայմանագրի 4.2 կետով նախատեսված կարգով՝ հանձնման-ընդունման գործընթացի կազմակերպմամբ:

2.8. COP17 համաժողովի ավարտից հետո Կահույքի հանձնում-ընդունումը կատարվում է մինչև 2026 թվականի նոյեմբերի 30-ը: Կահույքի հանձնում-ընդունումը կատարվում է COP17 համաժողովի անցկացման վայրում՝ կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Պատվիրատուն իր ներկայացուցչին նշանակում և Կատարողին կոնտակտային տվյալները փոխանցում է մինչև 2026 թվականի նոյեմբերի 5-ը:

2.9. Կատարողը կահույքի ամբողջականության, լրիվության, սարքինության կամ կահույքի հետ կապված որևէ այլ միջադեպի համար 2026 թվականի նոյեմբերի 30-ից հետո պատասխանատվություն չի կրում:

2.10. COP17 համաժողովի ընթացքում կորսված, ոչնչացված կամ վնասված Կահույքը Կատարողի կողմից ակտավորվում է՝ Համաձայնագրի 2.8 կետի հիման վրա Պատվիրատուին հանձնելու նպատակով:

2.11. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածներ 1-ը, 2-ը, 3-ը, 4-ը և 5-ը համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

2.12. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագրով նախատեսված ֆինանսական միջոցների հատկացման մասին ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Երևան, Նալբանդյան 25 ա, բն. 58
ՖՆ գործառնական վարչություն	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011066439	ՀՀ 1660030207649200
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02893152
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պ/կ	«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի տնօրեն
Ա.Խաչատրյան	***Հ.Սիմոնյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված №1
«06» «08» 2026թ. կնքված
համաձայնագիր №8
« 23 » « փետրվարի » 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պ/կ	«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի տնօրեն
Ա.Խաչատրյան	***Հ.Սիմոնյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՒԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ կահույքի ձեռքբերման և մատակարարում (ըստ «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի ներկայացրած չափանիշների)

Մատուցման ենթակա ծառայության սույն նկարագիրը մշակվել է Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.1. կետի և Հավելված 1.1-ի 2-րդ կետի «միջոցառման անցկացման վայրի նախագծում և կահավորում՝ բազմաթիվ հանդիպումների համար նախատեսված սենյակներով և առանձնացված տարածքներով» պարբերությամբ սահմանված պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

Ամփոփագիր

2026 թվականին Հայաստանը կիսուրընկալի ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (COP17), որի անցկացումը պահանջում է միջազգային չափանիշներին համապատասխան կահավորման և գույքի ապահովում՝ միջոցառման կազմակերպչական, գործառնական և ներկայացուցչական պահանջները բավարարելու նպատակով;

Նպատակ

Ծրագրի հիմնական նպատակն է COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ կահավորման և գույքի ապահովումը՝ մասնակիցների ընդունման, տեղաբաշխման, աշխատանքային գործընթացների կազմակերպման, հանգստի և սպասարկման գոտիների գործունեության կազմակերպման նպատակով:

Ընդհանուր նկարագրություն

1. **Կահավորման ընդհանուր հայեցակարգ**

Նախատեսվող կահավորումը ձևավորվել է ֆունկցիոնալության, ներկայացուցչականության և երկարատև շահագործման սկզբունքների հիման վրա: Կահույքի հիմնական մասը կազմված է գրասենյակային տիպի սեղաններից և աթոռներից, որոնք նախատեսված են տարբեր ֆորմատի աշխատանքային և պաշտոնական հանդիպումների կազմակերպման համար:

Կահավորման լուծումներում նախատեսվել է աթոռների և աշխատանքային գոտիների բազմազանություն՝ պայմանավորված միջոցառմանը մասնակցող բարձրաստիճան հյուրերի, պատվիրակությունների, կազմակերպիչների և տեխնիկական անձնակազմի տարբեր գործառույթներով և կարգավիճակով: Նախատեսվում են ինչպես պաշտոնական հանդիպումների համար նախատեսված աշխատանքային սեղաններ և աթոռներ, այնպես էլ հանգստի և ոչ պաշտոնական հաղորդակցության համար նախատեսված կահավորման տարրեր:

Ընտրված կահավորումը համատեղում է պաշտոնական ոճը, հարմարավետությունը և տարածքների արդյունավետ օգտագործման հնարավորությունը՝ ապահովելով միասնական և ներկայացուցչական միջավայր:

2. **Օգտագործման նպատակներ**

Նախատեսվող կահավորումը նպատակ ունի ապահովելու համաժողովի ընթացքում իրականացվող բազմաբնույթ աշխատանքային, քննարկման և հաղորդակցման գործընթացների պատշաճ

կազմակերպումը: Կահավորումը կիրառվելու է լիագումար նիստերի, պանելային քննարկումների, պաշտոնական հանդիպումների, ելույթների, երկկողմ և բազմակողմ բանակցությունների, աշխատանքային խորհրդակցությունների, ինչպես նաև ոչ պաշտոնական շփումների և հանգստի գոտիների կազմակերպման համար:

Հաշվի առնելով միջոցառման բազմօրյաբնույթը և մասնակիցների մեծաքանակ ներգրավվածությունը՝ կահավորումը նախատեսված է ապահովելու երկարատև և ինտենսիվ օգտագործման պայմաններում հարմարավետ, ֆունկցիոնալ և արդյունավետ աշխատանքային միջավայր:

Կահավորման անհրաժեշտության և կիրառման հիմնավորում

1. Ֆունկցիոնալ հիմնավորում

Նախատեսվող կահավորումը միտված է համաժողովի ընթացքում իրականացվող տարբեր ձևաչափերի միջոցառումների, աշխատանքային գործընթացների և հաղորդակցման հարթակների արդյունավետ կազմակերպմանը: Տարածքների բազմաֆունկցիոնալ օգտագործումը պահանջում է տարբեր նշանակության կահավորման առկայություն, որը հնարավորություն կտա ապահովել ինչպես պաշտոնական նիստերի և բանակցությունների անցկացումը, այնպես էլ մասնակիցների աշխատանքային և հանգստի պայմանները:

Կահավորման ընտրության ընթացքում հաշվի են առնվել միջոցառման ներկայացուցչական մակարդակը, մասնակիցների մեծաքանակ ներգրավվածությունը, ինչպես նաև տարածքների ինտենսիվ և շարունակական շահագործման անհրաժեշտությունը:

2. Ինչ գործառույթ է ապահովում կահույքը

Նախատեսվող կահավորումը ապահովում է մասնակիցների տեղաբաշխման, աշխատանքային գործընթացների կազմակերպման, հանդիպումների անցկացման և հաղորդակցման համար անհրաժեշտ պայմաններ: Կահույքը նախատեսված է լիագումար նիստերի, պանելային քննարկումների, երկկողմ և բազմակողմ հանդիպումների, աշխատանքային խորհրդակցությունների, ելույթների, մամուլի և ընդունելության գոտիների, ինչպես նաև ոչ պաշտոնական շփումների և սպասման տարածքների կազմակերպման համար:

Միաժամանակ կահավորումը հնարավորություն է տալիս ապահովել տարածքների ճկուն վերադասավորում՝ միջոցառումների տարբեր ձևաչափերին արագ ադապտացվելու նպատակով:

3. Օգտագործողների քանակ և հոսք

Համաժողովի շրջանակներում նախատեսվում է օրական մեծաքանակ մասնակիցների, պատվիրակությունների, կազմակերպիչների, տեխնիկական անձնակազմի և հյուրերի շարունակական ներգրավվածություն, որտեղ ընդհանուր հոսքը կարող է գերազանցել 15,000 անձը: Տարածքները նախատեսվում է շահագործել երկարատև և ինտենսիվ ռեժիմով:

Նման պայմաններում անհրաժեշտ է ապահովել բավարար քանակի և տարբեր նշանակության կահավորում, որը կդիմանա շարունակական օգտագործման ծանրաբեռնվածությանը և կապահովի միջոցառման անխափան կազմակերպումը:

4. Էրգոնոմիկա և հարմարավետություն

Կահավորման ընտրության ընթացքում առաջնահերթ ուշադրություն է դարձվել էրգոնոմիկային և օգտագործման հարմարավետությանը՝ հաշվի առնելով միջոցառման բազմօրյա և երկարատև բնույթը: Աթոռները և աշխատանքային սեղանները նախատեսված են երկարաժամկետ օգտագործման համար՝ապահովելով նստելու հարմար դիրք, շարժման ազատություն և արդյունավետ աշխատանքային պայմաններ:

Միաժամանակ նախատեսվում են հանգստի և ոչ պաշտոնական հաղորդակցության գոտիների համար համապատասխան կահավորման լուծումներ, որոնք նպաստում են մասնակիցների հարմարավետությանը և ընդհանուր աշխատանքային միջավայրի արդյունավետ կազմակերպմանը:

Տեխնիկական բնութագիր

Ծրագրի կազմակերպում և կառավարում

Ծրագրի կազմակերպման նպատակով նախատեսվում է սույն հավելվածով նկարագրված կահույքը ձեռքբերել և մատակարարել միջոցառման անցկացման վայր Կատարողի միջոցների հաշվին: Միջացառման ավարտից հետո կահույքը սեփականության իրավունքով կփոխանցվի ՇՄ նախարարությանը: ՇՄ նախարարությունը կահույքի համար կվճարի այդ նպատակով հատկացված ֆինանսական միջոցներից՝ կողմերի միջև համաձայնագրով սահմանված կարգով և չափով: Միջոցառումից հետո կողմերի միջև հանձնման ընդունման աշխատանքները կկատարվեն միջոցառման իրականացման վայրում:

Ծրագրի պատշաճ և ժամանակին իրականացման նպատակով նախատեսվում է ներգրավել համապատասխան որակավորում և փորձառություն ունեցող մասնագետների և բանվորական անձնակազմի լայն շրջանակ: Աշխատանքների կազմակերպման և վերահսկման համար կներգրավվեն ծրագրի ղեկավարներ, նախագծի համակարգողներ, լոգիստիկայի պատասխանատուներ, տեխնիկական մասնագետներ և տեղադրման աշխատանքների ղեկավարներ:

Գործնական աշխատանքների իրականացման համար կներգրավվի նաև համապատասխան թվով բանվորական անձնակազմ, որը կիրականացնի կահույքի բեռնաթափման, տեղափոխման, հավաքման, տեղադրման, վերադասավորման և ապամոնտաժման աշխատանքները: Անձնակազմի քանակը և կազմը կձևավորվեն՝ ելնելով աշխատանքների ծավալից, ժամանակացույցից և միջոցառման կազմակերպչական պահանջներից: Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է ներգրավել հետևյալ հիմնական մասնագիտական և տեխնիկական անձնակազմը.

- Ծրագրի ղեկավար և համակարգող
- Տեղադրման և մոնտաժման աշխատանքների ղեկավար
- Լոգիստիկայի մասնագետ
- Պահեստի և որակի վերահսկողության պատասխանատու
- Աշխատանքի անվտանգության պատասխանատու
- Կահույքի հավաքման և տեղադրման մասնագետներ
- Բեռնման և տեղափոխման բանվորական անձնակազմ

Կահավորման ենթակա գոտիների բաշխում

Հանգստի և սննդի գոտիներ՝

Նախատեսվում է տարբեր տեսակի սեղանների և աթոռների տեղադրում՝ ռեստորանային, բանկետային, խոհանոցային և հանգստի գոտիների կահավորման նպատակով: Կահույքը ներառում է ռեստորանային և բանկետային սեղաններ, կոկտեյլային բարձր սեղաններ, խոհանոցային աշխատանքային սեղաններ, ինչպես նաև ճաշարանի, բանկետային դահլիճի և խոհանոցի անձնակազմի համար նախատեսված աթոռներ և այլ գույք ըստ նախատեսված ֆունկցիոնալության:

Կիրառվող հիմնական նյութերն են՝ մետաղական և փայտե հիմքեր, MDF, PVC և պլաստիկ մակերեսներ, ինչպես նաև պոլիուրեթանային (PU) և պոլիպրոպիլենային նստատեղեր:

Կահույքի չափսերն ու կառուցվածքային առանձնահատկությունները տարբերվում են՝ պայմանավորված տարածքների ֆունկցիոնալ նշանակությամբ, օգտագործման ինտենսիվությամբ և շահագործման տարբեր պահանջներով:

Հանգստի գոտիների համար նախատեսվում է հետեւյալ կահույքը՝

1. **Ռեստորանային սեղան՝**
   Նախատեսված 3-րդ հարկի ռեստորանային գոտու համար
   - Չափս՝ 120 սմ x 60 սմ x 75 սմ, Քանակ՝ 65
   - Չափս՝ 180 x 60 սմ x 75 սմ, Քանակ՝ 40
   - Մետաղական ոտքեր, MDF մակերես
2. **Ճաշարանի, անձնակազմի և անվտանգության աշխատակիցների աթոռ**
   - Քանակ՝ 1200
   - Չափս՝ 43 սմ × 53 սմ × 82 սմ
   - Պլաստմաս
3. **Բանկետային դահլիճի աթոռ**
   - Քանակ՝ 400
   - Չափս՝ 50 սմ x 55 սմ x 80 սմ
   - Փայտե հիմք, պոլիուրեթանային ծածկույթով (PU) նստատեղ
4. **Բանկետային դահլիճի սեղան**
   - Քանակ՝ 48
   - Չափս՝ 2 մ
   - Մետաղյա ոտքեր, MDF ծածկույթ
5. **Կոկտեյլային բարձր սեղան**
   - Քանակ՝ 60
   - Չափս՝ 105 սմ x 70 սմ
   - Մետաղական ոտքեր, MDF մակերես
6. **Խոհանոցային աշխատանքային սեղան՝**
   Նախատեսված 4-րդ հարկի խոհանոցային գոտու համար
   - Քանակ՝ 44
   - Չափս՝ 180 սմ x 74 սմ x 74 սմ
   - Մետաղական ոտքեր, պլաստիկ մակերես
7. **Հանգստի գոտու սեղան՝**
   Նախատեսված -1 հարկի հանգստի գոտու համար
   - Քանակ՝ 68
   - Չափս՝ 120 սմ x 60 սմ x 74 սմ

- Մետաղական ոտքեր, պլաստիկ մակերես

Նիստերի գոտիներ՝

Նախատեսվում է տարբեր տեսակի գրասենյակային, կոնֆերանսային և հանգստի գոտիների կահույքի տեղադրում՝ ինչպիսիք են ստանդարտ և բազկակալով աթոռներ, կոնֆերանսային և ղեկավարի աթոռներ, տարբեր չափերի կոնֆերանսային և AV սարքավորումների սեղաններ, ինչպես նաև բազմոցներ, սուրճի սեղաններ, անձնակազմի և անվտանգության պահարաններ և այլ գույք ըստ նախատեսված ֆունկցիոնալության:

Կահույքի և կահավորման տարրերի արտադրության համար կիրառվում են մետաղական, պողպատե և փայտե կառուցվածքներ, լամինացված մակերեսներ, ցանցային կտոր (mesh), կաշվե և պոլիուրեթանային (PU) նստատեղեր, ինչպես նաև հակակոռոզիոն ծածկույթով շրջանակներ:

Կահույքի չափսերն ու տեխնիկական բնութագրերը տարբերվում են՝ պայմանավորված տարածքների ֆունկցիոնալ նշանակությամբ, օգտագործման ինտենսիվությամբ և շահագործման առանձնահատկություններով:

Նիստերի գոտիների համար նախատեսվում է հետևյալ կահույքը՝

1. **Ստանդարտ աթոռ բազկակալով (**նախատեսված պլենար վրանների համար**)**
   - Քանակ՝ 3260
   - Չափեր՝ 50 սմ x 53 սմ x 90 սմ
   - Մետաղական ոտքեր, ցանցային կտոր (mesh)
2. **Ստանդարտ աթոռ**
   - Քանակ՝ 6100
   - Չափեր՝ 44,5 սմ x 50,5 սմ x 85 սմ
   - Մետաղական ոտքեր, ցանցային կտոր (mesh)
3. **Կոնֆերանսային աթոռ**
   - Քանակ՝ 900
   - Չափեր՝ 60 սմ x 65 սմ x 110 սմ
   - Մետաղական ոտքեր, անիվներ, բարձրության կարգավորում, ցանցային կտոր(mesh)
4. **Ղեկավարի գրասենյակային աթոռ**
   - Քանակ՝ 25
   - Չափեր՝ 60 սմ x 65 սմ x 125 սմ
   - Չժանգոտվող պողպատե ոտքեր, կաշվե նստատեղ, բարձրության կարգավորումով
5. **Կոնֆերանսային սեղան սովորական/փակող վահանակով**
   - Չափս՝ 180 սմ × 50 սմ × 74 սմ, Քանակ՝ 350
   - Չափս՝ 180 սմ × 60 սմ × 74 սմ, Քանակ՝ 940
   - Հակակոռոզիոն ծածկույթով երկաթյա շրջանակ
   - Լամինացված մակերես
   - էլեկտրական վարդակներ
6. **Մեծ կոնֆերանսային սեղան փակող վահանակով**
   - Չափս՝ 180 սմ × 60 սմ × 74 սմ, Քանակ՝ 100
   - Հակակոռոզիոն ծածկույթով երկաթյա շրջանակ
   - Լամինացված մակերես
7. **Սուրճի սեղան**
   - Քանակ՝ 40
   - Չափս՝ 120 սմ x 60 սմ x 45սմ
   - Մետաղական ոտքեր, կերամոգրանիտե ծածկույթ
8. **AV սարքավորումների սեղան**
   - Քանակ՝ 85
   - Չափս՝ 160 սմ x 80 սմ x 75 սմ
   - Հակակոռոզիոն ծածկույթով երկաթյա շրջանակ
   - Լամինացված մակերես
9. **Բարձր աթոռ**
   - Քանակ՝ 5
   - Չափս՝ 50 սմ x 45 սմ x 112 սմ
   - Պողպատե ոտքեր, պոլիուրեթանային ծածկույթով (PU) նստատեղ
10. **Բազկաթոռ**
    - Քանակ՝ 80
    - Արհեստական կաշվից

- Չափս՝ 70 սմ x 70 սմ x 82 սմ

11. Սուրճի սեղան

- Քանակ՝ 30
- Չափս՝ 120 սմ x 60 սմ x 45 սմ
- Մետաղական ոտքեր, կերամոգրանիտե ծածկույթ

12. Աթոռ՝

- Քանակ՝ 6
- Չափեր՝ 60 սմ x 65 սմ x 125 սմ
- Չժանգոտվող պողպատե ոտքեր, կաշվե նստատեղ, բարձրության կարգավորումով

13. Սեղան՝

- 200 սմ x 100 սմ x 75 սմ
- Քանակ՝ 6
- Ծածկույթը՝ ՄԴՖ

14. Հյուրերի աթոռ՝

- Քանակ՝ 12
- Չափեր՝ 60 սմ x 65 սմ x 125 սմ
- Չժանգոտվող պողպատե ոտքեր, կաշվե նստատեղ, բարձրության կարգավորումով

Գրանցման եւ անվտանգության համար նախատեսված վրաններ՝

Նախատեսվում է գրանցման և անվտանգության կազմակերպման համար օգտագործվող վրանների կահավորում՝ ներառյալ աշխատանքային և սպասարկման սեղաններ, ստանդարտ և բարձր աթոռներ՝ նախատեսված անձնակազմի և օպերատիվ աշխատանքների իրականացման համար:

Նախատեսվում է կիրառել մետաղական կառուցվածքներ, MDF, լամինացված կամ պլաստիկ մակերեսներ, ինչպես նաև պոլիպրոպիլենային, ցանցային կտորով (mesh) կամ պոլիուրեթանային (PU) նստատեղեր՝ ապահովելով ինտենսիվ շահագործման դիմացկունություն և գործնականություն:

Կահույքի չափսերն ու կառուցվածքային առանձնահատկությունները կարող են տարբերվել՝ պայմանավորված գրանցման, վերահսկման և անվտանգության գործընթացների կազմակերպման առանձնահատկություններով, ինչպես նաև տարածքների ֆունկցիոնալ պահանջներով:

Գրանցման գոտիների համար նախատեսվում են հետևյալ կահույքը՝

1. Անձնակազմի իրերի պահարան

- Քանակ՝ 100
- Չափս՝ 90 սմ x 40 սմ x 90 սմ
- Մետաղական կառուցվածք
- Բանալի

2. Անձնակազմի իրերի պահարան

- Քանակ՝ 300
- Չափս՝ 85 սմ x 30 սմ x 45սմ
- Մետաղական կառուցվածք
- Բանալի և կոդային փակման համակարգ

3. Անվտանգության պահարան

Նախատեսված զենքի պահպանման համար

- Քանակ՝ 50
- Չափս՝ 30,5 սմ x 30 սմ x 14 սմ
- Մետաղական կառուցվածք
- Կոդային փակման համակարգ

Բացօթյա գոտիներ՝

Նախատեսվում է բացօթյա գոտիների կահավորում՝ ներառյալ տարբեր տեսակի սեղաններ, աթոռներ և հանգստի գոտիների կահույք՝ նախատեսված այցելուների սպասարկման, հանգստի և ընդհանուր օգտագործման համար:

Կիրառվելու է բազմակի օգտագործման էկոլոգիապես անվտանգ պլաստիկ, ինչպես նաև մետաղական և փայտե կառուցվածքային տարրեր՝ ապահովելով արտաքին միջավայրի պայմաններին դիմացկունություն, հեշտ սպասարկում և երկարաժամկետ շահագործում:

Կահույքի չափսերն ու կառուցվածքային առանձնահատկությունները կարող են տարբերվել՝ պայմանավորված բացօթյա տարածքների ֆունկցիոնալ նշանակությամբ, օգտագործման ինտենսիվությամբ և շահագործման պայմաններով:

1. Բացօթյա հանգստի գոտիների կահավորում

- Քանակ՝ 55 կոմպլեկտ (սեղան + աթոռ, 1+4)

- Պլաստիկ

2. Բացօթյա հանգստի գոտիների կահավորում՝ հովանոցով

- Քանակ՝ 80 կոմպլեկտ (նստարան + հովանոց)
- Մետաղի, փայտի և պլաստիկի համադրություն

Օժանդակ կահույք՝

Նախատեսվում է տարբեր տարածքների և ֆունկցիոնալ նշանակության գոտիների համար բազմատեսակ կահույքի և օժանդակ կահավորման տարրեր: Կահույքը կարող է օգտագործվել ինչպես նախապես պլանավորված, այնպես էլ միջոցառման ընթացքում առաջացող օպերատիվ և չնախատեսված կարիքների ապահովման նպատակով:

Կահույքի տեսակները, չափսերն ու տեխնիկական բնութագրերը կարող են փոփոխվել՝ պայմանավորված տարածքների ֆունկցիոնալ պահանջներով, շահագործման ինտենսիվությամբ, ինչպես նաև միջոցառման նախապատրաստման կամ անցկացման ընթացքում առաջացող լրացուցիչ անհրաժեշտություններով:

Սեղանների ամրացման դետալ

- Քանակ՝ 1400
- Չափս՝ 15 սմ x 5 սմ
- Մետաղ

Գլխավոր մասնաշենքի տարածքի համար գորգածածկ

- Քանակ՝ 5400 ք/մ
- Ռետինե հիմքով և հակահրդեհային նյութից

Տեղանքի նկարագիր

Համաժողովի անցկացման համար նախատեսված տարածքը լայնածավալ և բազմաֆունկցիոնալ համալիր է, որը ներառում է նաև սննդի պատրաստման և սպասարկման գոտիներ, տարբեր նշանակության ներքին և արտաքին տարածքներ: Տարածքի մեծ մակերեսը և բազմաբնույթ օգտագործումը պահանջում են տարբեր տեսակի կահավորում՝ պաշտոնական հանդիպումների, պատվիրակությունների ընդունելության, սննդի կազմակերպման, ինչպես նաև հանգստի և ոչ պաշտոնական շփումների համար՝ ապահովելով ճկուն և ինտենսիվ շահագործման համար համապատասխան լուծումներ:

Եզրակացություն

Ելնելով վերոգրյալից՝ COP17 միջոցառման համար նախատեսվող կահավորումը հանդիսանում է համաժողովի կազմակերպման և պատշաճ անցկացման առանցքային բաղադրիչ՝ ապահովելով միջոցառման ընթացքում իրականացվող բոլոր աշխատանքային, ներկայացուցչական և հաղորդակցման գործընթացների արդյունավետ կազմակերպումը: Ընտրված կահավորման լուծումները համապատասխանում են տարածքի ֆունկցիոնալ առանձնահատկություններին, միջոցառման միջազգային մակարդակին և մասնակիցների մեծաքանակ հոսքին՝ ապահովելով տարածքների արդյունավետ շահագործում, մասնակիցների հարմարավետություն և միջոցառումների տարբեր ձևաչափերի ճկուն կազմակերպում՝ բազմօրյա և ինտենսիվ օգտագործման պայմաններում:

Ֆինանսական գնահատական

«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի ներկայացրած չափանիշների՝ COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ կահույքի ձեռքբերման և մատակարարման ամբողջական ապահովման ընդհանուր բյուջեն կազմում է մինչև 371 129 869 ՀՀ դրամ (ներառյալ հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ): ՇՄ նախարարության և Կատարողի միջև կնքվող պայմանագրով կարող է նախատեսվել Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման վերաբաշխումներ, որը չի կարող գերազանցել Կառավարության որոշմամբ հատկացված գումարը:

Հավելված №2
«06» «08» 2026թ. կնքված
համաձայնագիր №8
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ կահույքի ձեռքբերման և մատակարարման

ՀՀ դրամ

h/h	**Ծառայության անվանումը**	**Նկարագրություն**	**Չափի միավորը**	**Քանակը**	**Միավորի գինը (ներառյալ ԱԱՀ)**	**Ընդհանուր գումարը (ներառյալ ԱԱՀ)**
1.	Ստանդարտ աթոռ	Մետաղական ոտքեր ցանցային կտոր (mesh) 44 5 սմ x 50 5 սմ x 85 սմ	հատ	6100	11 379	**69 411 900**
2.	Ստանդարտ աթոռ բազկակալով (նախատեսված պլենար վրանների համար)	Մետաղական ոտքեր ցանցային կտոր (mesh), 50 սմ x 53 սմ x 90 սմ	հատ	3260	15 607	**50 878 820**
3.	Կոնֆերանսային աթոռ	Մետաղական ոտքեր անիվներ բարձրության կարգավորում ցանցային կտոր (mesh), 60 սմ x 65 սմ x 110 սմ	հատ	900	28 856	**25 970 400**
4.	Ղեկավարի գրասենյակային աթոռ	Չժանգոտվող պողպատե ոտքեր կաշվե նստատեղ բարձրության կարգավորումով, 60 սմ x 65 սմ x 125 սմ	հատ	31	155 044	**4 806 364**
5.	Հյուրերի աթոռ	Չժանգոտվող պողպատե ոտքեր կաշվե նստատեղ բարձրության կարգավորումով, 60 սմ x 65 սմ x 125 սմ	հատ	12	92 384	**1 108 608**
6.	Կոնֆերանսային սեղան սովորական/փակող վահանակով	Հակակոռոզիոն ծածկույթով երկաթյա շրջանակ լամինացված մակերես էլեկտրական վարդակներ, 180 սմ x 50	հատ	350	75 022	**26 257 700**

		սմ × 74 սմ				
7.	Կոնֆերանսային սեղան սովորական/փակող վահանակով	Հակակոռոզիոն ծածկույթով երկաթյա շրջանակ լամինացված մակերես էլեկտրական վարդակներ 180 սմ × 60 սմ × 74 սմ	հատ	940	75 010	**70 509 400**
8.	Սեղանների ամրացման դետալ	Մետաղ 15 սմ x 5 սմ	հատ	1400	487	**681 800**
9.	Սեղանների միացման վարդակներ	Պղնձյա մալուխ պլաստմասե հիմք	հատ	1290	2 258	**2 912 820**
10.	Մեծ կոնֆերանսային սեղան փակվող վահանակով	Հակակոռոզիոն ծածկույթով երկաթյա շրջանակ լամինացված մակերես 180 սմ × 60 սմ × 74 սմ	հատ	100	91 582	**9 158 200**
11.	AV սարքավորումների սեղան	Հակակոռոզիոն ծածկույթով երկաթյա շրջանակ լամինացված մակերես 160 սմ x 80 սմ x 75 սմ	հատ	85	83 779	**7 121 215**
12.	Սուրճի սեղան	Մետաղական ոտքեր կերամոգրանիտե ծածկույթ, 120 սմ x 60 սմ x 45 սմ	հատ	40	66 574	**2 662 960**
13.	Անձնական իրերի պահարան	Մետաղական կառուցվածք բանալի 90 սմ x 40 սմ x 90 սմ	հատ	100	43 422	**4 342 200**
14.	Անձնական իրերի պահարան	Մետաղական կառուցվածք բանալի և կոդային փակման համակարգ 85 սմ x 30 սմ x 45 սմ	հատ	300	19 401	**5 820 300**
15.	Անվտանգության պահարան (նախատեսված զենքի պահպանման համար)	Մետաղական կառուցվածք կոդային փակման համակարգ 30 5 սմ x 30 սմ x 14 սմ	հատ	50	19 242	**962 100**
16.	Բարձր աթոռ	Պողպատե ոտքեր պոլիուրեթանային ծածկույթով (PU) նստատեղ 50 սմ x 45 սմ x 112 սմ	հատ	5	31 372	**156 860**
17.	Սեղան	Ծածկույթը՝ ՄԴՖ, 200 սմ x 100 սմ x 75 սմ	հատ	6	204 041	**1 224 246**
18.	Ռեստորանային սեղան	Մետաղական ոտքեր MDF մակերես 120 սմ x 60 սմ x 75 սմ	հատ	65	46 897	**3 048 305**
19.	Ռեստորանային սեղան	Մետաղական ոտքեր MDF մակերես 180 սմ x 60 սմ x 75 սմ	հատ	40	54 366	**2 174 640**
20.	Բանկետային դահլիճի աթոռ	Փայտե հիմք պոլիուրեթանային ծածկույթով (PU) նստատեղ 50 սմ x 55 սմ x 80 սմ	հատ	400	19 707	**7 882 800**
21.	Բանկետային դահլիճի սեղան	Մետաղյա ոտքեր MDF ծածկույթ 2 մ	հատ	48	74 369	**3 569 712**
22.	Ճաշարանի անձնակազմի և անվտանգության աշխատակիցների աթոռ	Պլաստմաս 43 սմ × 53 սմ × 82 սմ	հատ	1200	11 493	**13 791 600**

23.	Կոկտեյլային բարձր սեղան	Մետաղական ոտքեր MDF մակերես 105 սմ x 70 սմ	հատ	60	29 668	**1 780 080**
24.	Խոհանոցային աշխատանքային սեղան	Մետաղական ոտքեր պլաստիկ մակերես, 180 սմ x 74 սմ x 74 սմ	հատ	44	24 543	**1 079 892**
25.	Հանգստի գոտու սեղան	Մետաղական ոտքեր պլաստիկ մակերես, 120 սմ x 60 սմ x 74 սմ	հատ	68	23 249	**1 580 932**
26.	Բազկաթոռ	Արհեստական կաշվից, 70 սմ x 70 սմ x 82 սմ	հատ	80	84 238	**6 739 040**
27.	Սուրճի սեղան	Մետաղական ոտքեր կերամոգրանիտե ծածկույթ 120 սմ x 60 սմ x 45 սմ	հատ	30	55 740	**1 672 200**
28.	Բացօթյա հանգստի գոտիների կահավորում	Սեղան + աթոռ (1+4) Պլաստիկ	կոմպ.	55	84 833	**4 665 815**
29.	Բացօթյա հանգստի գոտիների կահավորում՝ հովանոցով	Նստարան + հովանոց Մետաղի փայտի և պլաստիկի համադրություն	կոմպ.	80	166 027	**13 282 160**
30.	Գորգածածկ (գլխավոր մասնաշենքի տարածքի համար)	Ռետինե հիմքով և հակահիդեհային նյութից	ք/մ	5400	4 792	**25 876 800**
ԸՆԴԱՄԵՆԸ						**371 129 869**

Հավելված №3
«06» «03» 2026թ. կնքված
համաձայնագիր №8
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պ/կ	«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի տնօրեն
Ա.Խաչատրյան	***Հ.Սիմոնյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՒԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ կահավորման ծառայություններ (ըստ «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի ներկայացրած չափանիշների)

Մատուցման ենթակա ծառայության սույն նկարագիրը մշակվել է Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.1. կետի և Հավելված 1.1-ի 2-րդ կետի «միջոցառման անցկացման վայրի նախագծում և կահավորում՝ բազմաթիվ հանդիպումների համար նախատեսված սենյակներով և առանձնացված տարածքներով» պարբերությամբ սահմանված պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

Ամփոփագիր

2026 թվականին Հայաստանը կիյուրընկալի ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (COP17), որի անցկացումը պահանջում է միջազգային չափանիշներին համապատասխան կահավորման և գույքի ապահովում՝ միջոցառման կազմակերպչական, գործառնական և ներկայացուցչական պահանջները բավարարելու նպատակով;

Նպատակ

Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել COP17 համաժողովի անցկացման համար նախատեսված կահավորման և գույքի մոնտաժման, տեղադրման, վերադասավորման և ապամոնտաժման աշխատանքների իրականացումը՝ ստեղծելով միջոցառման տարածքների ժամանակին շահագործման պատրաստությունը և ապահովելով համաժողովի անխափան կազմակերպչական ընթացքը:

Ընդհանուր նկարագրություն

COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ կահավորման տեղադրման աշխատանքները կիրականացվեն հաստատված ժամանակացույցին և տարածքների շահագործման հերթականությանը համապատասխան: Աշխատանքները կկազմակերպվեն փուլային եղանակով՝ ապահովելով տարբեր ֆունկցիոնալ գոտիների հերթական կահավորումը, աշխատանքների փոխհամաձայնեցված իրականացումը և միջոցառման նախապատրաստական ընդհանուր գործընթացի անխափան ընթացքը:

Մոնտաժման ընթացքում կիրականացվեն կահույքի բեռնաթափման, տեղափոխման, հավաքման, տեղադրման, դասավորության, անհրաժեշտության դեպքում վերադասավորման, ինչպես նաև միջոցառման ավարտից հետո ապամոնտաժման աշխատանքները: Ծանր և մեծածավալ կահավորման տարրերի անվտանգ տեղադրման նպատակով կիրականացվի համապատասխան բարձրացման տեխնիկայի, այդ թվում՝ ամբարձիչ սարքավորումների օգտագործում:

Աշխատանքների իրականացման ընթացքում կապահովվի անվտանգության գործող նորմերի պահպանումը, աշխատանքների որակի վերահսկողությունը, ինչպես նաև կահավորման ամբողջականության և շահագործման պատրաստ վիճակի ապահովումը: Մոնտաժման գործընթացը կիրականացվի այնպես, որպեսզի բացառվեն միջոցառման նախապատրաստական և կազմակերպչական

աշխատանքների ընդհատումները և ապահովվի բոլոր գոտիների պատրաստությունը սահմանված ժամկետներում:

1 Տեխնիկական և կազմակերպչական ապահովում

Ծրագրի իրականացման շրջանակներում կապահովվի կահույքի մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքների ամբողջական տեխնիկական և կազմակերպչական սպասարկումը: Դրա նպատակն է ապահովել կահավորման ժամանակին տեղադրումը, անվտանգ շահագործումը, տարածքների օպերատիվ վերադասավորման հնարավորությունը և միջոցառման ավարտից հետո գույքի կազմակերպված ապամոնտաժումը:

Աշխատանքները կիրականացվեն համապատասխան մասնագիտական անձնակազմի, անհրաժեշտ տեխնիկական միջոցների և բարձրացման սարքավորումների կիրառմամբ՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, տեխնիկական շահագործման և որակի վերահսկողության պահանջները: Ծառայությունների իրականացումը նախատեսվում է կազմակերպել համաժողովի նախապատրաստական և ավարտական փուլերին համապատասխան՝ ապահովելով աշխատանքների արդյունավետ և անխափան իրականացումը:

1.1 Կահույքի մոնտաժում և ապամոնտաժում

Համաժողովի կազմակերպման շրջանակներում նախատեսվում է իրականացնել միջոցառման անցկացման համար անհրաժեշտ ամբողջ կահույքի մոնտաժման, տեղադրման, վերադասավորման և ապամոնտաժման աշխատանքները: Աշխատանքները ներառում են կահույքի հավաքում՝ արտադրողի տեխնիկական պահանջներին համապատասխան, տարածքներում տեղաբաշխում՝ ըստ հաստատված հատակագծերի (layout), միջոցառման ընթացքում անհրաժեշտության դեպքում վերադասավորում, ինչպես նաև միջոցառման ավարտից հետո ամբողջ կահավորման ապամոնտաժում և տեղափոխման նախապատրաստում:

Ծառայությունն իրականացվելու է փորձառու մասնագետների կողմից՝ ապահովելով աշխատանքների անվտանգ, որակյալ և սահմանված ժամկետներում իրականացումը՝ առանց միջոցառման բնականոն ընթացքը խաթարելու:

1.2 Գորգածածկի մոնտաժման ապահովում

COP17 համաժողովի նախապատրաստման շրջանակներում նախատեսվում է իրականացնել **5,400 քառակուսի մետր** ընդհանուր մակերեսով գորգածածկի մոնտաժման աշխատանքներ:

Ծառայությունը ներառում է գորգածածկի տեղադրում, ամրացում և մոնտաժ՝ անհրաժեշտ օժանդակ նյութերի և մոնտաժային պարագաների կիրառմամբ՝ համաձայն հաստատված նախագծային լուծումների:

Աշխատանքները կիրականացվեն տարբեր ֆունկցիոնալ նշանակության գոտիներում՝ ապահովելով տարածքների պատրաստվածությունը, աշխատանքների շարունակականությունը և սահմանված ժամկետների պահպանումը:

1.3 Ամբարձիչի գործարկում

Կահույքի մոնտաժման և տեղադրման աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է օգտագործել ամբարձիչ տեխնիկա՝ ծանր և մեծածավալ կահավորման տարրերի անվտանգ բարձրացման, տեղափոխման և տեղադրման նպատակով:

Ամբարձիչի գործարկումն անհրաժեշտ է բազմահարկ և մեծածավալ տարածքներում աշխատանքների արդյունավետ կազմակերպման, ծանր բեռների ձեռքով տեղափոխման բացառման, աշխատանքի անվտանգության պահանջների պահպանման և աշխատանքների սահմանված ժամկետներում ավարտման համար: Ծառայությունը նախատեսվում է իրականացնել 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ համապատասխան որակավորում ունեցող օպերատորի և անվտանգության պահանջների ապահովմամբ:

Տեղանքի նկարագիր

COP17 համաժողովի անցկացման համար նախատեսված տարածքը բաղկացած է տարբեր ֆունկցիոնալ նշանակության ներքին և արտաքին գոտիներից, որոնք նախատեսված են պաշտոնական միջոցառումների, աշխատանքային հանդիպումների, պատվիրակությունների սպասարկման, ինչպես նաև տեխնիկական և օժանդակ գործընթացների կազմակերպման համար: Տարածքների բազմազանությունը և շահագործման ինտենսիվությունը պահանջում են մոնտաժային աշխատանքների փուլային, ճկուն և համակարգված իրականացում՝ ապահովելով բոլոր գոտիների պատրաստվածությունը սահմանված ժամկետներում:

Եզրակացություն

Վերոգրյալից ելնելով՝ կահույքի մոնտաժման, տեղադրման, վերադասավորման և ապամոնտաժման ծառայությունները հանդիսանում են COP17 համաժողովի նախապատրաստման և անցկացման կարևորագույն կազմակերպչական բաղադրիչներից մեկը: Ծառայությունների պատշաճ իրականացումը հնարավորություն կտա սահմանված ժամկետներում ապահովել բոլոր տարածքների շահագործման

պատրաստությունը, կահավորման անվտանգ և արդյունավետ տեղադրումը, ինչպես նաև միջոցառման ընթացքում անհրաժեշտ գործառնական ճկունությունը: Աշխատանքների կազմակերպումը կապահովի համաժողովի անխափան ընթացքը, տարածքների արդյունավետ օգտագործումը և միջազգային մակարդակի միջոցառման կազմակերպչական պահանջներին համապատասխան միջավայրի ձևավորումը:

Ֆինանսական գնահատական

«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի ներկայացրած չափանիշների՝ COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ կահավորման ծառայությունների ամբողջական ապահովման ընդհանուր բյուջեն կազմում է մինչև 36 252 000 ՀՀ դրամ (ներառյալ հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ): ՇՄ նախարարության և Կատարողի միջև կնքվող պայմանագրով կարող է նախատեսվել Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման վերաբաշխումներ, որը չի կարող գերազանցել Կառավարության որոշմամբ հատկացված գումարը:

Հավելված №4
«06» «08» 2026թ. կնքված
համաձայնագիր №8
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Դոպինգ Ստեյս» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

COP 17 համաժողովի անցկացման վայրի կահավորման (հավաքում, մոնտաժում, տեղափոխում, տեղադրում և այլն) ծառայությունների ամբողջական ապահովում

ՀՀ դրամ

h/h	**Ծառայության անվանումը**	**Նկարագրություն**	**Չափի միավորը**	**Քանակը**	**Միավորի գինը (ներառյալ ԱԱՀ)**	**Ընդհանուր գումարը (ներառյալ ԱԱՀ)**
1.	Կահույքի մոնտաժում և ապամոնտաժում	Պահեստավորում, տեղափոխում, դասավորում սենյակներում ըստ գծագրի	միջոցառման ամբողջ կահույքը	1	12 996 000	**12 996 000**
2.	Գորգածածկի մոնտաժման ապահովում	Ներառյալ նյութածախսը	քմ	5400	4 104	**22 161 600**
3.	Ամբարձիչի շահագործում	Կահույքի տեղափոխման համար	օր	5	218 880	**1 094 400**
ԸՆԴԱՄԵՆԸ						**36 252 000**

Հավելված №5
«06» «08» 2026թ. կնքված
համաձայնագիր №8
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
№ «№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Դոպինգ Ստեյլս» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**անվանումը**	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	79951112	«COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ կահույքի ձեռքբերման և մատակարարման» փուլային ծառայություններ	-	-	-	-	-	-	-	334 016 882	334 016 882	371 129 869	371 129 869	371 129 869
2		COP 17 համաժողովի անցկացման վայրի կահավորման ծառայություն (հավաքում, մոնտաժում, տեղափոխում, տեղադրում և այլն) ծառայություններ	-	-	-	-	-	-	-	32 626 800	32 626 800	36 252 000	36 252 000	36 252 000
Ընդամենը			-	-	-	-	-	-	-	**366 643 682**	**366 643 682**	**407 381 569**	**407 381 569**	**407 381 569**